



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Վ Ե Ռ Ի Դ Ո

**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
1932 Թ. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
Ծ Ր Ա Գ Ի Ր Ը**

////////////////

338.98(47.925)

4-73

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ ԱՆԴ. ԿՈՄ. ՇԻՆ. ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ
(ՆԱԽԿԻՆ ԿԱՌՈՒՑՈՂՆԵՐԻ) ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն - 1 9 3 2



4-73

12 AUG 2013

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 1932 Թ. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱՒԻՐԸ

1932 թվի մեծագույն խնդիրներից մեկը, վոր առաջադրում է բան-
վոր դասակարգին հնգամյակը չորս տարում կատարելու ընթացքով,
հանդիսանում է ժողովրդատնտեսական պլանի շինարարական ծրա-
դիրը։ Այլ կերպ չէր ել կարող լինել։ Են՝ վոր հնգամյակը չորս տարում
կատարելը պահանջում է անխոնջ ու յարված աշխատանք, պահանջում
է ինչքան կարելի չէ արագ դործարկել բոլոր արդյունաբերական ձեռ-
նարկությունները, բոլոր նոր շինարարությունները ժողովրդական տնտե-
սությունից թուր ճյուղերի գծով։

Արդյունաբերություն, էներգետիկայի, գյուղատնտեսության և այլ
ճյուղերի գծով կատարվող նոր շինարարությունների դործարկման դան-
դադեցումը, նրանց ձգձգումը վիժեցնում է աշխատանքի նորմալ ըն-
թացքը, միաժամանակ հիմնական պատճառն է հանդիսանում արդյու-
նաբերություն պլանային առաջադրությունների թերակատարմանը՝ աշ-
խատանքի արտադրողականության բարձրացման, ընդհանուր արտադ-
րանքի սոխլացման ցուցանիշների գծով, և դրանով իսկ վիժեցնում է
սոցիալիստական կուտակման աճման, նրա տեմպերի արագացման պլա-
նային առաջադրությունները։

Շինարարության առաջադրում կուտակության առաջադրած խն-
դիրներին լրջությունը կրկնապատկում է չնորհիվ այն հանգամանքի,
վոր մենք ընթացիկ տարում պետք է ավարտենք հնգամյա պլանի կու-
տարումը։ Շինարարության սրբեկանները սահմանված ժամկետներին ա-
վարտելու և դործարկելու ուղղությամբ մեր մղելիք հաջող պայքարից
է կախված հիմնականում հնգամյա պլանի կատարումը վոչ միայն ընդ-
հանուր արտադրանքի գծով, այլև մնացած բոլոր ցուցանիշների գծով՝
զրա հետ միասին և ամենից առաջ հենց այդ պայքարից է կախված
սոցիալ-կուտակական շինարարության պլանը, բանվոր դասակարգի
նյութական-կենցաղային պայմանների բարելավման բոլոր միջոցա-
ռումների հաջող կիրառումը։

Յեւ քանի վոր հնգամյակի կատարումը հիմնականում կախված է
նաև 1932 թվի շինարարական ծրագրի հաջող կատարումից, ուստի մենք
պետք է մարտախնորեն, բայց իկորեն ձեռնարկենք շինարարության
նախապատրաստման աշխատանքներին, վորպեսզի նրա հմուտ կազմա-
կերպումով, ավելի կոնկրետ պայքարելով ընթացիկ շինարարական
տարվա դժվար խնդիրների իրագործման համար, հաղթահարելով բո-
լոր այն դժվարությունները, վոր բղխում են սոցիալիստական տնտե-
սության աննախնիք աճման պայմաններից, ամբողջաբեր իրացնենք
շինարարության հատկացումները և նվաճենք հնգամյակի յեղրափակ-
ման տարվա բարձրունքները։

Իսկ 1932 թվի խնդիրներն իրոք վոր վիժխարի լին ու դժվարին։

Ընկ. Որջոնիկիձեն կուտակության 17-րդ կոնֆերանսում խոսելով 1932
թ. խնդիրների դժվար լինելու մասին, հիշեցնում էր, վոր հետամնաց
յերկրում սոցիալիզմ կառուցելն իրոք վոր հեշտ դործ չէ...

Մենքորյա անդուլ պայքար մղելով սոցիալիստական պլանային
տնտեսության վիժխարի պլանների կատարման համար, որըստորե
տիրապետելով համաշխարհային նորագույն տեխնիկայի նվաճումնե-
րին, վերակառուցելով գյուղատնտեսության ամբողջ դեմքն ու բո-
վանդակությունը խոշոր սոցիալիստական հողագործության հիմունք-
ներով, վորպեսին մենք ունենք այժմ ի՞նչ։ Միությունում, բանվոր դա-
սակարգը կատարում է իր այն մեծ պարտավորությունը, վորը նա
վերցրել է համաշխարհային սրույետաբիտի առաջ։ Ընկ. Ստալինը ա-
ցիալիստական արդյունաբերության աշխատողների կոնֆերենցիա-
յում խոսելով համաշխարհային սրույետաբիտի առաջ մեր ունեցած
պարտավորության մասին, ասում էր. «Մենք պետք է այնպես առաջ
շարժվենք, վոր ամբողջ աշխարհի բանվոր դասակարգը, նայելով մեզ,
կարողանա ասել, —անա՛, նա, իմ առաջավոր ջոկատը, անա՛, նա, իմ
հարվածային բրիգադը, անա՛, նա, իմ բանվորական իշխանությունը,
անա՛, նա, իմ հայրենիքը. նրանք կատարում են իրենց գործը, մեր
գործը, լավ է ոգնենք նրանց ընդդեմ կապիտալիստների և հրահրենք
համաշխարհային հեղափոխության գործը»։

Մենք արգարացնում ենք համաշխարհային բանվոր դասակարգի
հույսերը, կատարելով նրանց առաջ վերցրած մեր պարտավորություն-
ները։

Յեւ անհ հենց այն պատճառով, վոր մենք կատարում ենք համաշ-
խարհային հեղափոխության գործը, մեր յերկրի բանվոր դասակարգը
և կուտնտեսական գյուղացիությունը պետք է պայքարեն մեր լարված
պլանների համար, վորովհետև մենք առնվազն 5—10 տարում պետք
է կտրենք, անցնենք այն 50—100 տարվա տարածությունը, վորով
մենք յետ ենք մնացել տեխնիկական-տնտեսական տեսակետից առա-
ջավոր կապիտալիստական յերկրներից. «Կամ մենք այդ կանն՛նք,
կամ մեզ կձգմենք» (Ստալին)։

Ահա մեր այդ պարտավորությունները և մեր այդ յետ մնացած
լինելն է հիմնական պատճառ այն բանի, վոր բանվոր դասակարգը և
կուտնտեսական գյուղացիությունը համ Կ. (բ) Կ. Կ. Կ. ի լենինյան
դեկավարությամբ պայքարում է մեր լարված պլանների համար, առա-
վելադույն տեմպերի համար, վորովհետև մենք ավելի մեծ արագու-
թյամբ պետք է կտրենք անցնենք մեր տեխնիկական-տնտեսական հետա-
մնացություն ամբողջ տարածությունը։

Մեր մինչև որս ձեռք բերած նվաճումները վոչ մի կերպ չեն կա-
րող նսեմացվել 1932 թ. պլանի ավելի մեծ լինելու պատճառով, մեր
անցած ճանապարհի թերդնահատությունը, ձեռք բերված նվաճումների
գնահատման իմաստով, վոչ մի տեղ չպետք է ունենա, վորովհետև
1932 թ. մեծ պլանը մենք ձեռք ենք բերել չնորհիվ այն լարված համա-
պայքարի, վորը մենք մղել ենք մեր պլանային սոցիալիստական
տնտեսության հնարավորությունների ոգտագործման համար։ Իսկ այդ
նվաճումները մենք հեշտությամբ չեն, վոր ձեռք ենք բերել. հարկա-
վոր է յեղել ամենաանխնա պայքար մղել կուտակության գլխավոր
գծի կիրառման համար, ընդդեմ աջ վտանգի, վորը գլխավոր վտանգն



(9314-53)

22242-59

և հանդիսանում մեր զարգացման տվյալ աստիճանի վրա, ընդդեմ «ձախ» խոտորումների, ընդդեմ հակահեղափոխական արոցկիզմի, ընդդեմ դասակարգային թշնամիների և նրանց այն փորձերի, վոր ա- նում ելին նրանք սոցիալիզմի հաղթարշավը կասեցնելու համար:

Վոր մի կերպ չպետք է մոռանալ, վոր շնորհիվ կուսակցության գլխավոր գծի հաջող կերպով, շնորհիվ ժողովրդատնտեսական աճ- ման պլանները հաջող կատարման հնգամյակի առաջին յերեք տա- րիներում, կուսակցության լուրջագույն հնգամյակը չորս տարում կա- տարելու մասին դառնալով ջանվորների և կոլտնտեսականների բազ- մամիլիոն մասսաների սեփականությունը, իրոք հնարավոր դարձրեց հնգամյակի կատարումը 4 տարում: Այստեղից բխում է այն, վոր 1932 թ. պլանը և հնգամյակի կատարումը 4 տարում նախապատրաստ- ված են ժողովրդական տնտեսության առաջին յերեք տարիների պլան- ների կատարման և գերակատարման ընթացքով:

1932 թ. ժողովրդատնտեսական աճման շինարարական ծրագրում հիմնական շեշտը դրվում է ներդրված կապիտալներն ակտիվացնելու, այդ կապիտալներից առավելագույն էֆեկտ ստանալու գործն արա- ղացնելու վրա, վորովհետև սոցիալիստական կուսակման տեսակերի բարձրացումը, որվա հարվածային խնդիրն է:

Ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում ներդրվող կապի- տալում շինարարական ծրագրի տեսակարար կշիռը զգալի յե նաե- այն պատճառով, վոր կապիտալ ծախքերի ընդհանուր գումարից 55-60 և ավելի տոկոս ընկնում է զուտ շինարարությանը: Առաջին յերեք տարիներում Հայաստանում զուտ շինարարության ներդրում- 1928—29 թ. 23 միլ. ռուբ., 1929—30 թ. 28 միլ. ա. ներք յեղել են: 1931 թ. 32—33 միլ. ռ. (որինտիր), այսպիսով, 3 տարվա ընթաց- քում ներդրվել է 83—84 միլ. ռուբլու պատկանելի մի գումար:

1932 թ. պլանում զուտ շինարարությանը նախատեսված է 90 միլ. ռուբ., ընդ վորում այս գումարում հաշվի չեն առնված այն հսկա- յական ծախսումները, վորոնք կատարվելու յեն յերկրաչափից տու- ժած շրջանների վերականգնման շինաշխատանքների գծով: Անգամ առանց այդ գումարը հաշվելու, 1932 թ. զուտ շինարարության վրա Հայաստանում ծախսվելու յե ավելի մեծ գումար, քան հնգամյակի առաջին յերեք տարիներում միասին վերցրած: Հենց միայն այդ ել թափված է ապացուցելու, թե ինչպիսի հսկայական չափերի յե հաս- նելու մեր շինարարությունն ընթացիկ տարում:

Չնայած մեր անվիճելի նվաճումներին, վոր մենք ձեռք ենք բե- րել շնորհիվ սոցմրցման և հարվածայնության լայն ծավալման մի- ջոցով, այնուամենայնիվ մենք չկարողացանք ամբողջապես կատա- րել 1931 թ. շինարարական ծրագիրը: Տեղ-տեղ, անգամ մի քանի խո- շոր կազմակերպությունների գծով, ինչպիսիք են Հայպետշինը, Բնակչինկոտը, մենք տարեկան պլանը թերակատարեցինք 40—50 տոկոսով: Շինարարական ծրագրի կատարման այս ձեղքվածքն առավել ևս խորանում է շնորհիվ այն հանգամանքի, վոր թերակատարված են նաև շինարարական ինքնաթիռի իջեցման և վորակի բարձրացման պլա- նային առաջադրությունները:

Չնայած Ժողովրդական այն վորոշման, ըստ վորի մեկ խորհարդ- մետրի կառուցման արժեքը սահմանված էր 17 ռ. 50 կ., չինա- րարական կազմակերպությունների և շինանյութ արտադրող ձեռնար- կությունների վատ աշխատանքի հետևանքով մեկ խոր. մետրի կա- ռուցումը նստեց 24—25 ռ., վորի շնորհիվ մի քանի հարյուր հազար ռուբլու վնաս հասավ մեր տնտեսությանը:

1932 թ. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Սվեյլի մանրամասն կանգ առնենք 1932 թ. շինարարության վրա:

Ինչպիսի որբեկտներին և բաղկացած զուտ շինարարության մեջ ներդրվելիք 90 միլ. ռուբլու գումարը: Այս շինարարության մեջ մասնավոր են թե թերալարտ և թե նոր կառուցվելիք շինքերը: Արդյու- նաբերական շինարարության մեջ մասնավոր են այնպիսի խոշոր ո- բյեկտներ, ինչպես Դավալուի ցեմենտի գործարանը, Դարաքլիսայի ցիանամիտի գործարանը, Ալլահվերդու ծծմբաթթվուտի և պղնձաթ- ճասպի գործարանները, Լենինականի մանվածքային գործարանի յերկրորդ հերթը, Յերեվանի կարի գործարանը, կարբիտի նոր գոր- ծարանը, փայտամշակման գործարանը, Ծխախոտի գործարանը, Լենի- նականի մսի կոմբինատը: Շենքեկառնական գծով Զորագետի գործարան- մը, Քանաքեռգետի շինաշխատանքների ծավալումը, Քաղսի-Գյումուշի ելեկտրոկայանի շինարարության սկզբնավորությունը և այլն: Զրային տնտեսության գծով՝ դռերի վորոգումը, փոքր Սարդարաբատի շրանց- քը և այլն: Խոշոր շինարարություն է լինելու կոմունալ տնտեսության գծով, հիմնականում Յերևան և Լենինական քաղաքներում, ինչպես և արդյունաբերական տիպի բոլոր մյուս ավաններում:

Հայկոմկուսի (Բ) Կ. Կ. —ի անցյալ տարվա դեկտեմբերի վերջի հայտնի վորոշումը սահմանում էր քաղաքային տնտեսության զար- գացման մեծ ծրագիր: Ահա այդ ծրագրի իրագործումը պետք է դրվի մեր բոլոր կազմակերպությունների և առաջին հերթին Յերեվանի ու Լենինականի Քաղխորհուրդների աշխատանքի հիմքում: Քաղաքա- յին տնտեսության հետագա ել ավելի լայն զարգացման աշխատանք- ների անկյունաքարը պետք է կազմի Հայկոմկուսի (Բ) Կ. Կ. —ի վերո- հիշյալ վորոշումը:

Ներկա տարում կառուցվելիք խոշոր որբեկտների շարքը պետք է դասել Յերևանի տրամվայը, Յերևանի և Լենինականի ջրմուղները, կոյուղին, բաղլիքները, հյուրանոցները, լվացատները և այլն: 1932 թ. մեծ ծավալ է ստանալու սոցիալ-կուլտուրական ձեռնարկություն- ների շինարարությունը:

1932 թ. շինարարական ծրագրում հատուկ շեշտ է դրվելու կու- րորտային շինարարության վրա: Շինարարական աշխատանքներ են ծա- վալվելու Դիլիջանի սանատորիայում, ինչպես կիսավարտ, նույնպես և նորկառույց սանատորիայում, Արզնիում, վորոշ աշխատանք է կա- տարվելու Իստի-Սուլում, և այլն: Սրա վրա ավելացնելով նաև Սոցալի կողմից Դարաքլիսայի, Դարաչիչակի հանգստյան տներում կատար- վելիք շինարարությունը, մենք կարող ենք պատկերացնել, թե ինչպիսի խոշոր ծրագրի ունենք կատարելու ընթացիկ տարում:

Բայց միայն այս թվարկումով չի վերջանում շինարարական ծրագիրը: Այստեղ չեն մտնում պետական և տնայնագործական-արդյունաբերական կոոպերացիայի տասնյակ ձեռնարկությունները, բնակարարային շինարարությունը, վորին այս տարի հասկացված է 11 միլիոն ուղբուց ավելի մի գումար, և այլն: Մեր այս թվարկման մեջ չեն մտնում նաև գյուղատնտեսության սոցիալիստական սեկտորում կառավարվելիք շինարարությունը — խորհրդային շինությունների և կոլտնտեսությունների շինարարությունը և Երկրորդ կոմերի գծով կատարվելիք շինարարությունը, և այլն, և այլն:

Թե ինչքան մեծ է ծրագիրը, մենք այդ մասին արդեն ասացինք, վոր նախորդ տարիներին և վոչ մեկում մենք այդպիսի շինարարական ծրագիր չենք ունեցել: Ծրագիրը մեծ է, բայց ռեալ:

90 միլիոն շինարարության համար հարկավոր է հսկայական քանակությամբ շինանյութ: Մոտավոր հաշվով և կլոր թվերով վերցրած, մեր շինարարական ծրագիրն իրագործելու համար մեղ հարկավոր է 800-000 խ. մ. քար, 250 տոնն մետաղալար, 40-000 տոնն ցեմենտ, 45-000 տոնն կիր, 27-000 տոնն ալեբաստր և գած, 100-000 խ. մ. կլոր շինափայտ, 120-000 խ. մ. սղոցած շինափայտ, 1-400 տոնն յերկաթյա խողովակներ, 1-500 տոնն թուջի խողովակներ, 240-000 խ. մ. բնական ավազ, 120-000 խ. մ. արհեստական ավազ, 120-000 խ. մ. պեմզայի ավազ և այլն, և այլն:

Այս ամբողջ շինանյութը մենք պետք է պատրաստենք տեղական նյութերի գծով ձեռնված սեղանում, այնպես վոր շինարարական աշխատանքներն սկսվելիս՝ ստիպված չլինենք շինանյութերի բացակայություն պատճառով դանդաղեցնել շինարարության հարաճյուն տեմպերը:

Վոչ վոքի համար դադարիք չէ, վոր մի քանի ներմուծվող շինանյութերի ամբողջ պահանջը մենք ժամանակին ծածկել չենք կարող, մասամբ այն պատճառով, վոր նրանց արտադրությունը չի բավարարում նրանց պահանջի աճմանը, մասամբ ել չնորհիվ տրանսպորտի լարված դրություն, վորը (տրանսպորտը) առայժմ չի հասել ժողովրդական տնտեսության բուռն տեմպերին:

Մեր մթերող կազմակերպությունները պետք է ժամանակին ներկայացնեն պահանջվող քանակության շինանյութերի հայտերը, վոր պետքի նրանց ստացումն սկսվի ձեռնված ամիսներում:

Բոլորովին այլ է դրությունը տեղական շինանյութերի մատակարարման գործում: Մեղ բոլորիս լավ հայտնի յե, վոր մենք ունենք բավարար քանակությամբ քար, ավազ, գած, կիր, այնինչ անցյալ շինարարական տարում մենք կանատես յեղանք այնպիսի մի դրություն, յերբ մեր միջանի շինությունները կարիք ելին դրում տեղական շինանյութերի:

Ահա մեր այս թերությունը վոչ մի կերպ չի կարելի արդարացնել «որչեկտիվ» պատճառաբանություններով (տրանսպորտի վատ աշխատանք և այլն). այստեղ մենք կտրականապես պետք է չեչտենք, վոր տեղական շինանյութերի պակասությունը հետևանք է այդ շինանյութերն արտադրող կազմակերպությունների վատ աշխատանքի:

Թե ինչ պետք է անել բավարար քանակությամբ շինանյութեր պատրաստելու համար, այդ առթիվ միանգամայն պարզ ու հստակ ցուցմունք է տալիս Ժողկոմխորհի և Հայկոմկուսի(բ) Կ.Ա. —ի 1931 թ. դեկ-

տեմբերի 25-ի վորոշումը 1932 թ. շինարարության նախապատրաստվելու միջոցառումների մասին:

Քարի և ավազի հարցի առթիվ առաջարկված է բոլոր շինկազմակերպություններին, վորպեսզի ծավալեն իրենց աշխատանքը, ինքներբ բաց անեն քարի ու ավազի նոր հանքեր և մեխանիզմներ ձեռք բերեն ավազի արհեստական պատրաստման համար: Քար հայթայթող կենտրոնական կազմակերպությունն է հանդիսանում Հյւսիսարևոտայր, վորը պարտավոր է շինարարական աշխատանքներն սկսելուց առաջ ավարտի դեպի Ալանի քարհանքները տանող գծի կառուցումը, և դրանով իսկ մեքենայացման յենթարկի քարի փոխադրման գործը, սկսի քարի մեքենայական հանույթը:

Նկատի ունենալով այն, վոր Հայտնարկոտայր չի կարողանա լիովին բավարարել բոլոր շինկազմակերպություններին, վերջիններս ինքներբ պետք է ձեռնարկ ամիսներում պատրաստեն իրենց քարն ու ավազը, վոր պետքի 1932 թվին տվյալ շինանյութերի պակասի վոչ մի դեպք չլինի:

Կրի և գածի գծով, վորոնք արտադրվում են մեր համապատասխան գործարաններում, պակասը պետք է բացատրել հիմնականում տվյալ ձեռնարկությունների վատ աշխատանքով: Նկատենք, վոր ինչպես այս կազմակերպությունների, այնպես ել Հայտնարկոտայր գծով անցյալ տարի մենք ակնատես ելինք սոցմրցման և հարվածայնության ամենաթույլ ծավալման: Մեր համապատասխան կազմակերպությունները — կուսբիլիները, կոմյերիտիությունը, պրոֆիությունները և գործարանային յեռանկյունները պետք է առավելագույն ուշադրություն նշարկեն սոցմրցման և հարվածայնության կոնկրետ ձևերի դարգացմանը:

Այժմ մենք չենք կարող հանդուրժել այնպիսի մի դրություն, վորով մեր շինարարական տեմպերը հարվածի տակ են դրվում շինանյութերի քացակայության:

Հայաստանի 1932 թ. ամբողջ շինարարությունը կենտրոնանալու յե 22 կազմակերպությունների ձեռքում, վորոնց մեծ մասը նեղ մասնադիտական դրասնյակներ են, որինակ՝ Յեմչինը, Քիմչինը, Ղուբրի վարչությունը, Անդրադինչինը, Չորագես, Քանաքեռագես և այլն: Քաղաքացիական շինարարությունը վարող հիմնական կազմակերպություններն են — 1) Հայպետչինը, վորի ձեռքում կենտրոնացված է ԺՏԳՍ-ի արդյունաբերական շինարարությունը: Նախնական հաշվով Հայպետչինն այս տարի կատարելու յե 20 միլիոնի շինարարութնյու: 2) Հայբնակչինկոտայր, վորի ձեռքում կենտրոնացված է ամբողջ բնակարանային կոոպերատիվ շինարարությունը, կատարելու յե 6,3 միլ. ուղբու շինարարություն: 3) Մատչին շինարարական կազմակերպությունը, վոր զբաղվում է սննդագործական արդյունաբերության ձեռնարկությունների շինարարությամբ, կատարելու յե 8,4 միլ. ուղբու շինարարություն: 4) Գյուղչին, վորը վարում է համարյա ամբողջ գյուղատնտեսական շինարարությունը, կատարելու յե 7,5 միլ. ու շինարարություն: 5) Կուրչին, վորը վարում է համարյա ամբողջ կուրորային շինարարությունը, կատարելու յե մոտ 5,7 միլ. նոր շինարարություն: 6) Յերբադխորհրդի շինարարությունը, վոր վարում է ամբողջ կոմսոնալ շինարարությունը, կատարելու յե 5 միլ. ուղբ. շինարարություն:

Առանձին տեսակի շինություններն առանձին կազմակերպությունների ձեռքում կենտրոնացնելը կատարվում է միատիպության սկզբունքով:

կազմել, բաց անել դասընթացներ, այն հաշվով, վոր շինարարութիւնն ապահովվի վորակյալ բանութով՝ շինեցոնն սկսելիս:

Հարկավոր է անհապաղ ձեռնարկել ինչպես եժանադին տիպի, այնպես ել մշտական բնակարանների կառուցման աշխատանքին, վորովհետեւ դա հոգունութեան դեմ պայքարելու հիմնական միջոցառումներից մեկն է հանդիսանում:

Անցյալ տարիների ընթացքում մի շարք ձեռնարկութիւններում բաւարար մասնաշաղկան աշխատանք է կատարվել բանվորների ինքնամրցման գծով: Այս փորձն ամբողջապես պետք է փոխադրել շինարարութեան բնագավառը և աշխատել առավելագոյն չափով բանվորների ամբողջել շինարարութեանը, ինքնամրացում անցակցնելով վոր միայն 1932 թվի, այլ հետագա տարիների համար: 1931 թվի ընթացքում մեզ մօտ զգալի չափով առաջ գնաց բանվորական մատակարարման հետադարձական գործը, ինչպես անդամները, այնպես ել արդիւնաբերական ապրանքների մատակարարման գծով, բացվեցին նոր կոտակերտիլ խանութներ, կրպակներ, ճաշարաններ, բուֆետներ, թեյարաններ և այլն, սակայն մի շարք շինարարութիւնների գծով այդ աշխատանքը դեռ բավարար չափով չի կարգավորված, ահա թէ ինչու կուսակցութիւնը հասարակական անդի կազմակերպութիւնների և հենց իրենց՝ շինարարական զբաղեցաւների ուշադրութիւնն է հարվիրում բանվորական մատակարարման հետագա բարելավման խնդրի վրա: Նոր շինարարական տարվա սկզբից մենք ունենք կենտրոնական դիրեկտիվ մարմինների փորձումը՝ առաջնակարգ կարեւորութիւն ունեցող շինարարութիւններում դրազմած բանվորների համար լավագոյն պայմաններ ստեղծելու մասին: Ահա այս կարեւոր նշանակութիւն ունեցող դիրեկտիվի կատարմանը զուգընթաց, կուսակցութիւնը և կառավարութիւնը հետագայում ևս ավելի մեծ չափով պայքարելու յեն բանվորական մատակարարման գործն առավելագոյն չափով բարելավելու համար:

Ահա այս հիմնական մոմենտների շնորհիվ մենք կկարողանանք ապահովել մեր ձեռնարկութիւններին բանութ հայթայթելու գործը: Ընկ. Ստալինը տնտեսավարների կոնֆերենցիայում մատնանշելով բանութի հաւաքման քաղաքականութեան միանգամայն հստակ ուղիները, հիշեցնում է, վոր բանութի հաւաքի գործում վորոշ չափով գոյութիւն ունեցող ինքնահոսն այժմ արդեն կանգ է առել շնորհիվ գոյուղի սոցիալիստական վերակառուցման վերելքի, և մենք պետք է ինքնահոսի «բաղադրականութիւնից» անցնենք բանութի կազմակերպված հաւաք կատարելու քաղաքականութեանը, կոլտնտեսութիւնների և կոլտնտեսականների հետ պայմանագիր կնքելու քաղաքականութեանը:

Դա ամենապարզ ճանապարհն է, բայց այդ նուիրապես ինքնահոսով չի կատարվում, այլ անհրաժեշտ է նրա կենսագործման համար անխոնջ աշխատանք կատարել: Մովալել շինարարութեան մեքենայացումը, վերացնել սեղոնայնութիւնը: Այս աշխատանքին զուգընթաց մենք պետք է շեշտը դնենք նաեւ շինաշխատանքի մեքենայացման վրա: Որքան մոտական նշանակութիւն կունենա մեր տեմպերն ել ավելի արագացնելու, բանութի մեր պահանջը մեղմելու, շինարարութիւնն եժանապահելու և բանվորների աշխատանքի պայմանները թեթեւացնելու տեսակետից:

Ընկ. Ստալինը, խոսելով բանութի հաւաքագործման նոր պայմանների մասին, ասում է. «Պրանից բղխում է այն վոր անհրաժեշտ է անհապաղ անցնել աշխատանքի ամենաժանր պրոցեսների վեֆեկայացմանը, արմող թափով դարձացնելով այդ գործը (անտառային արդյունաբերութիւն, շինարարական գործ, արտադրութիւններ, բեռնումպարպում, արանսպորտ, սե մետաղագործութիւն և այլն): Հարկավ, այդ չի նշանակում, թէ պետք է թողնել ձեռքի աշխատանքը: Ընդհակառակը, ձեռքի աշխատանքը դեռ յերկար ժամանակ ամենալուրջ դեր է խաղալու արդյունաբերութեան մեջ: Սակայն այդ նշանակում է, վոր աշխատանքի պրոցեսների մեքենայացումը մեզ համար այն նոր վնասակար ուժն է, առանց վորի հնարավոր չէ պահպանել վոր մեր տեմպը և վոր ել արտադրութեան նոր մասշտաբը»:

Այդ է կուսակցութեան առաջնորդի դիրեկտիվը: Սակայն մենք պետք է խոստովանենք, վոր այս ասպարիզում մենք շատ քիչ բան ենք արել: Զհալմած ջրատնտեսական աշխատանքները, մենք շինարարութեան մեջ ունենք ընդամենը միքանի տասնյակ հազար ուղբում մեքենաներ, բայց դրանք ել մենք լրիվ բեռնավորմամբ չենք ոգտագործել: Ըստ 1931 թվի կոնյուկտուր տվյալների, շինարարական դրամանյակների տնդրիւնութեան սակ յեղած մեքենաներն ոգտագործվել են միջին հաշվով 40—45%—ով:

Հարկավոր է, վոր մենք այս տարի մեծ աշխատանք կատարենք շինարարական պրոցեսները մեքենայացնելու ուղղութեամբ, ձեռք բերելու նոր մեքենաներ, և վոր դիւրաւորն է, յեղած բոլոր մեքենաներն ոգտագործենք լրիվ բեռնավորումով, վորովհետեւ միայն այդ դեպքում մենք կկարողանանք թեթեւացնել կառուցող բանվորների աշխատանքը, եժանապահել շինարարութիւնը, ուժեղացնել աշխատանքի տեմպը և պակասեցնել նոյն պլանի կատարման համար անհրաժեշտ բանվորների թիւը:

Շինարարութեան սեղոնայնութեան հարցերը մենք դեռ ամբողջապես արխիվը չենք հանձնել: Զիշտ է, այս տարի մենք զգալի նվաճումներ ունենք այն խմաստով, վոր մեր խոշոր շինարարութիւններն այնպիսի ցուրտ ամիսներում, ինչպիսին դեկտեմբեր, հունվար և փետրվար ամիսներն են, շինարարական աշխատանքը շարունակեցինք (Յեմչին, Չորագետ, Քանաքեռ, Ղարաքիլիսայի ցիանամիտի գործարան, Յերգետ 11 և այլն), բայց նաեւ դրան, մենք պետք է շեշտենք, վոր հիմնական շինարարութիւնը վարող կազմակերպութիւնների գծով չհաջողվեց բավարար չափով ծավալել շինարարութիւնը ձմեռվա ամիսների ընթացքում: Զիշտ է, շնորհիվ վորոշ ժամանակվա ուժեղ ցրտերին, հնարավոր չէր կատարել արտաքին շինարարական աշխատանքները, բայց այդ հանգամանքը չէր կարող խանգարել ներքին աշխատանքների յայն ծավալմանը: Մենք պետք է բոլոր միջոցները ձեռք առնենք, վորպեսզի այս տարի շինարարութիւնը կատարվի նաեւ ձմեռն ամիսներին: Զե վոր փաստ է, վոր համաշխարհային մետալուրգիայի պարծանք Մագնիտոգորսկի գոմէյան—հնոցը գործարկվեց հունվարի 29—ին, 27 ատոմսան ստանամանիքում. ել ինչո՞ւ մեզ մօտ, վոր գտնվում ենք հարավում և նման ստանամանիքներ չունենք, հնարավոր չպետք է լինի շինարարական աշխատանքը շարունակել ամբողջ ձմեռը: Բոլոր պայմանները մենք

ունենք. մենք պետք է ամեն դեպքում պայքարենք յուրաքանչյուր շինարարական օրվա համար և իրականացնենք կյուր շինարարական տարին մեզ մոտ:

Հիմնական շինարարության պլանը կատարելու և տարվա ընթացքում առավելագույն քանակությամբ նոր ձեռնարկություններ դրժարկելու համար անհրաժեշտ է.

...բ) վերացնել սեղոնային շինարարությունը և շինարարությունն ամբողջ ֆրոնտով փոխադրել ամբողջ տարվա աշխատանքի, ամեն կերպ ոգտադրվելով խոշոր շինկազմակերպությունների և մշտական կառուցող բանվորների աճող կադրերի 1931 թ. փորձը» (ընկ. Որջոնիկիձեյի զեկուցման առթիվ 17-րդ կուսկոնֆերենցիայի ընդունած բանաձևը):

Մեր բոլոր շինկազմակերպությունները պետք է ընդհուպ ձեռնարկեն կենսադրժելու 17-րդ կուսկոնֆերենցիայի այս գերեկտիվը, վերականգնելով իրենց աշխատանքը:

ՎՈՐԱԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

1932 թ. ինչպես իՍՂՄ-ի վողջ ժողովրդական տնտեսության, այնպես էլ հիմնական շինարարության առաջ դրված է հսկայական նշանակություն ունեցող մի խնդիր: Խոսքը վորակական ցուցանիշների մասին է: Շինարարության դժով վորակական ցուցանիշների խնդիրն է—եթանացնել շինարարությունը, լավացնել նրա վորակը, տնտեսել զեֆիցիտային շինանյութերը, բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը:

Դեռևս կուսակցության 16-րդ համագումարը հիմնական շինարարության աշխատանքների դրժելյան մասին վորոշեց հետևյալը.—

«Համագումարն արձանագրում է, վոր ջնայած վերջին տարիներում հիմնական շինարարության ասպարիզում ձեռք բերված վորոշ բարելավման, արդյունաբերական շինարարության պրակտիկան մինչև այժմ էլ ունի մի շարք խոշոր թերություններ: Դրանք են—նախադժային աշխատանքների յետ մնալը և անբավարար դրժելյունը, շինարարական սեզոնի վող լրիվ ոգտադրժումը, շինարարության ձգված ֆրոնտը և դանդաղ տեմպերը, շինարարական աշխատանքների բարձր արժեքը և ցածր վորակը, շինարարական ինդեկսի իջեցման առաջադրժյան կատարումը...» և այլն:

Այս վորոշումը մենք մինչև այժմ չենք կատարել և 1931 թվին, վոր խանակ շինարարության արժեքն իջեցնելու, մեր շինարարական կազմակերպություններն զգալի չափով բարձրացրին այդ արժեքը:

Ժողկոմխորհի վորոշման համաձայն, Հայաստանում շինարարության մեկ խորանարդ մետրը պետք է նստեր 17 ո. 60 կոպ., փաստորեն 1931 թ. նստել է 23-ից մինչև 25—28 ո.: Շինարարական ինդեկսի բարձրացման պատճառով 1931 թ. մենք կորցրինք մի քանի հարյուր հազար ոտքի:

1932 թ., համաձայն իՍՂՄ կենսադրժկոմի յերկրորդ սեսիայի գերեկտիվների, հիմնական շինարարության արժեքը պետք է իջեցվի 17 տոկոսով: Հայաստանի 90 միլ. ոտքի շինարարական ծրագիրն իրագործելիս շինարարության արժեքի իջեցումը հսկայական տնտեսում պետք է տա: Այդ տնտեսումը մեզ մոտ ավելի ևս մեծ եֆեկտ պետք է

ունենա, վորովհետև մենք պետք է աշխատենք բարակացնել պատերի հաստությունը:

Մինչդեռ Անդրկովկասյան մասշտաբով 1 քառ. մ. կառուցվածքի տարածությունը հավասար է շենքի ծավալի $6\frac{1}{2}$ խ. մետրին, մեզ մոտ, Հայաստանում կառուցվածքի քառակուսի մետրը բաղկացած է շենքի ծավալի 7 քառ. մետրից, իսկ $\frac{1}{14}$ մասով թանգացնում է յուրաքանչյուր քառ. մետրի շինարարության արժեքը. ահա թե ինչու, իջեցնելով վերադիր ծախքերը, շինանյութերի արժեքը և նրանց փոխադրման ծախքերը 17 տոկոսով, մենք միաժամանակ պետք է իջեցնենք 1 քառ. մ. շինարարության արժեքը վող թե 17 տոկոսով, այլ շատ ավելի:

Հայաստանի ժողկոմխորհը 1932 թ. համար յուրաքանչյուր խոր. մետրի շինարարության արժեքը սահմանել է 18 ո. 30 կ.: Յեղնելով 1931 թ. արժեքի մակարդակից և 1932 թվի հիմնական ծախքերի ծավալից, այս լիմիտը պահպանելով մենք հսկայական տնտեսում կունենանք:

1932 թ. լիմիտները սահմանելիս, յեղակետ է ընդունված 1931 թ. հիմնական լիմիտը 22 ո. 04 կ. հաշվի առնելով արժեքի 17% իջեցումը, 1 խոր. մետրի արժեքն այս տարվա համար սահմանվեց 18 ո. 30 կ.: Այնուհետև կատարվեցին այլ հաշվարկումներ շինարարության այն փաստական գները շուրջը, վորոնք սահմանվեցին ժողկոմխորհի վորոշումից հետո, ինչպես նաև արանսպորտի նոր տակսայիայի շուրջը, և ադպիտով 1 խոր. մետրի արժեքը դառնում է 17 ո. 48 կ., այսինքն՝ ավելի պակաս, քան սահմանված փաստական լիմիտը: 1 խոր. մետրի 18 ո. 30 կ. արժեքը ունալ է, վորովհետև այն սահմանելիս հաշվի չեն առնված մի շարք մոմենտներ, վորոնք կարող են և պետք է եֆեկտ ունենան, որինակ՝ ոացիոնալիզատորական միջոցառումները մեքենայացումը, աշխատանքի արտադրողականության բարձրացումը և այլն, և այլն: Ուստի այս լիմիտը պետք է համարվի մաքսիմումը և մեր ինդիքը պետք է լինի ել ավելի իջեցնել այն:

Շինարարական ինդեկսի իջեցումն ապահովելու գործում խոշոր դեր պետք է խաղա տեղական շինանյութերի գների իջեցումը: Նկատենք, վոր տեղական շինանյութեր արտադրող ձեռնարկությունները 1931 թ. անհանդուրժելի կերպով բարձրացրին իրենց արտադրանքի գները և դրանով իսկ վիժեցրին գների մասին ժողկոմխորհի ընդունած վորոշման կատարումը: Այս տարվա փետրվար ամսին ժողկոմխորհը սահմանեց տեղական շինանյութերի վաճառման գները, վորպիսիք պետք է դիտվեն իբրև հետագա իջեցման յենթակա թվեր, ինչքանով վոր հետագայում աշխատանքի արտադրողականությունը պետք է բարձրանա, իսկ վերադիր ծախքերն իջնեն:

ՏԵՂԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԻՆԱՆՑՈՒԹԵՐԻ ԳՆԵՐԸ

Կիր	Հայրենաբեստի Դավալուի և Ջալուի գործարաններ	1 տոնն
	Ֆրանկո-գործարան	24 ո.
	Հայրենյութի Դավալուի գործարաններ	27 »
	» Յերիվանի »	28 »
Դաջ	Հայրենաբեստի Յերիվանի գործարանի, 1 տոնն ֆրանկո-գործարան	23 »
	Հայրենյութի և Հայաստանի գործարաններ	26 »

պաշտոնները պահանջում են լարել բոլոր ուժերն ու հնարավորությունները կառուցվող շենքերը ժամանակին գործարկելու և տնտեսա-միջոցների հետ հաշվարկումներ կատարելու ուղղությամբ, վերստին անցել են այն ժամանակները, յերբ շինկազմակերպություններն առանց կոնսուլի ախանս էյին ստանում պատվիրատուներից և բանկից սուբսիդիա էյին վերցնում նույն աշխատանքը կատարելու համար: Այժմ ինչպես հայտնի յե, ավանսավորումը վերացված է, վերացված է նաև վարկավորումը բանկերի կողմից: Շինկազմակերպությունները պետք է ամբողջ շինարարական աշխատանքը կատարեն իրենց չըջանառու միջոցներով և աշխատանքը կատարելու համեմատ մինչ ժամկետային ակտերով ստանան կատարված աշխատանքի արժեքը:

Ուրբով ստուգումը, վարկավորումը վոչ թե ըստ պլանի, այլ ըստ պլանի փաստական կատարման պահանջում են, վորպեսզի շինարարական կազմակերպությունները մոբիլիզացիայի յենթակեն իրենց բոլոր ներքին հնարավորությունները, բոլոր միջոցները, առավելագույն արդյունավետությամբ գործադրելու և կատարվող աշխատանքի վորակի համար պատասխանատու լինելու ուղղությամբ:

Հարկավոր է շտապ կերպով վերջացնել յուրաքանչյուր շինկազմակերպության չըջանառու գումարների սահմանման գործը, համաձայն տվյալ կազմակերպության ընդհանուր բեռնավորման, այդ գումարները դենել շինկազմակերպությունների տրամադրության տակ և պահանջել հատակ ու անխափան աշխատանք պլանային առաջադրությունները սահմանված ժամկետներին կատարելու ուղղությամբ: Շինարարական կազմակերպությունները շտապ կարգով պետք է ափսոսի բերեն հաշվապահական բոլոր հաշիվները յուրաքանչյուր օր, հնարավորություն առնողներով մինչ ժամկետային ակտերով կատարել հաշվարկումները տնտեսական կազմակերպությունների հետ, յուրաքանչյուր առանձին դեպքում ներկայացնելով համապատասխան փաստաթղթերը:

Տնտեսաշարկը մեր ընդհանուր պլանային աշխատանքի հիմնական ողակն է, յերբեք չի կարելի տնտեսաշարկը հակադրել պլանին, այլ հարկավոր է ամենորյա գործնական ու համառ պայքարով ամրացնել այն, վորովհետև նա լինիլիպլանի համար մղվող պայքարի հիմնական հարցերից մեկն է:

Աշխատանքի կազմակերպման գործում առավելագույն ուշադրություն պետք է դարձնել արտադրանքի նորմաների ու գնահատումների սահմանմանը: Ինչպես հայտնի յե, 1931 թվից մտցված են միասնական համամիութենական նորմաներ և Անդրկովկասյան միասնական գնահատումներ. սակայն այդ նորմաներն անցյալ տարի վոչ բոլոր շինարարություններում են կիրառված, և վոր գլխավորն է, վոչ ամեն տեղ են ճիշտ կիրառված: Հարկավոր է, վոր մենք այս շինարարական տարվա սկզբից ստուգենք նրանց կիրառման ճշտությունը և այդ հիման վրա կատարենք այս կամ այն փոփոխություններ: Այն հավասարեցումը, վոր կար միջանի մասերում անցյալ տարի, պետք է արմատիկ արվի, իսկ դա հնարավոր է վոչ թե բանաձևերով և բարի ցանկություններով, այլ աշխատանքի կազմակերպման համառ ու հետևողական աշխատանքով:

Հարկավոր է շտապ կարգով բոլոր աշխատանքներում սահմանել

պրեմիալ-պրոգրեսիվ գործավարձը և դրանով իսկ լավագույն վարձատրություն սահմանել, յենքերով վոչ միայն կատեգորիաներից, այլև աշխատանքի կոնկրետ արդյունքներից, բանվորի վորակից, ինչ պրոգրեսիայի բանվոր էլ նա լինի:

Հավասարեցումը և դիմագրկությունը, արտադրության այդ վատթար թշնամիները, պետք է ամբողջապես վերացնել շինարարական տարվա առաջին իսկ ամսում, այդ ուղղությամբ համառ ու ամենորյա պայքար մղելով: Այն տնտեսավարը, այն շինարարը, վորն արգելք կհանգիստանա շինարարական բոլոր հնարավոր աշխատանքներում գործավարձ անցկացնելու գործին, այդպիսի տնտեսավարը չի կարող գլխավորել շինարարությունը:

Միաժամանակ ամենահամառ կերպով պետք է պայքարել միասնական նորմաներն ու գնահատումները վիժեցնելու դեմ: Աշխատանքի այդպիսի սխտեմը պետք է դիտվի իբրև բանվորներին հրապուրելու սխտեմ և այդպիսին թույլ տվողներին պետք է կանչել խիստ պատասխանատվության:

Ինժեներ-տեխնիկական աշխատողներին համապատասխան կերպով ուղտադրծելու խնդրին առավելագույն ուշադրություն պետք է դարձնել: Անորմալ է այնպիսի մի դրություն, յերբ ինժեներ-տեխնիկական աշխատողները գրասենյակային-տեխնիկական աշխատանքով ավելի շատ են ծանրաբեռնված լինում, քան իրենց անմիջական գործով: Հարկավոր է նրանցից վերցնել կողմնակի առաջադրություններ և նրանց հնարավորություն տալ զարգացնելու իրենց նախաձեռնությունը ռացիոնալիզատորական միջոցառումներ կիրառելու և հսկելու անմիջապես իրենց ղեկավարությամբ կատարվող շինարարության պլանների կատարման վրա: Աշխատանքի այդպիսի սխտեմ ամոցնելով մենք շատ ավելի մեծ տնտեսական եֆեկտ կստանանք, քան թե նրանց անմիջական աշխատանքից բացի տալով այնպիսի բեռնավորում, վորը նրան կտրում է շինարարությունը ամենորյա և կենդանի մասնակցություն ու ղեկավարություն ունենալուց: Միաժամանակ պետք է նոր միջոցներ ձեռք առնել էլ ավելի բարելավելու նրանց նյութական-կենցաղային դրությունը:

Շինարարական տարին սկսելիս, ավելի ճիշտ առանձին շինարարություններն սկսելիս, անհրաժեշտ է ստուգել, թե նրանք ինչքանով են ապահովված հարկ յեղած դժադրերով, նախագծերով, հատկացված հողամասերով և, վորը նույնքան կարևոր է, Ֆինանսով: Անցյալ տարի սակավ չեյին դեպքեր, յերբ ստիպված էյին լինում դադարեցնել այս կամ այն օբյեկտի շինարարությունը՝ բանվորական դժադրերի բացակայությամբ: Այս պատճառով, իսկ եսքիդային նախագծով կառուցել չի կարելի. հիմքերը վորովում, վերջացում էյին, բայց դուրս եր գալիս, վոր տված հողամասի հատկացումը ճիշտ չի կատարվել, և այն:

Քիչ չեն յեղել դեպքեր, յերբ սկսված այս կամ այն շինարարական օբյեկտը 2 ամսվա աշխատանքից հետո կանգ եր առնում Ֆինանսապես լրիվ կամ մասնակիորեն ապահովված չլինելու պատճառով:

Սուսախելու համար այս բոլոր պատմություններից, վորոնք լուրջ հարված են հասցնում շինպլանների կատարմանը և փոխանակ ակտիվացնելու ներդրված կապիտալը, բոլորովին հակառակ պատկեր են առնողում, մի առժամանակ անդործություն մասնելով շինանյութերն ու



ընդհանրապես ներդրված կապիտալը, մեր շինարարականությունները նախքան շինարարությունն սկսելը, պետք է հաշվեն ու ստուգեն բոլոր վերահիշյալ հանգամանքները և նոր միայն հաստատապես ձեռք զարկեն այս կամ այն որոշակի շինարարությանը: Ընդ վերում մեկ որոշակի շինարարությունն սկսելու, յեթե նա ըզխում է սահմանված հերթականությունից, պետք է շինարարությունը մինչև վերջը հասցնել: Մեր անցյալ տարվա շինարարական աշխատանքի հիմնական բացերից մեկը սոցմրցման և հարվածայնություն թույլ ծավալումն է շինարարության մեջ: Սյնայի մի դրուկուն, յերբ արդյունաբերական-բնակարանային շինարարության գծով զբաղված բանվորներին անցյալ տարի սոցմրցմամբ և հարվածայնությամբ ընդգրկված եր միայն 42 տոկոսը, մինչդեռ Հայաստանի մյուս արդյունաբերական միությունների գծով ընդգրցման այդ տոկոսը հասնում էր միջին հաշվով 70-ի, իսկ առանձին ձեռնարկություններում՝ անգամ 90-ի և 100-ի, — դալիս է ապացուցելու, թե այդտեղ ինչքան յետ է մնացել մեր մասնաշաղկան — քաղաքական աշխատանքը: Մի քանի ընկերները փորձում են այդ բացատրել շինարարության առանձնահատուկ պայմաններով. բայց այդ ճիշտ չէ, այլապես ինչո՞ւ ելեկտրականների շինարարության մեջ զբաղված բանվորները սոցմրցմամբ և հարվածայնությամբ ընդգրկված են 90 և ավելի տոկոսով:

Սյտեղ պետք է խստություն դնել պրոֆմիությունական ապարան ու պրոֆաշխատանքը շինարարությունների ստորին ողակներում շտապ կարգով ուժեղացնելու անհրաժեշտությունը: Դա մի անհրաժեշտ միջոցառում է զարկ տալու համար մեր բուռն առաջխաղացմանը, վորովհետև կառուցող բանվորներին ամենալայն մասնակցի հարաճուն արտադրական-քաղաքական ակտիվությունը, յեթե այդ պիտին ճիշտ գլխավորվի, մեզ կտա աճման ավելի բուռն տեմպ, աշխատանքի ավելի բարձր վորակ:

Շինարարությունների յեռանկուններին ամենաանբառ ու զուգակցված աշխատանքը և բանվորության նախաձեռնության հմուտ ղեկավարությունը շինֆինպլանների կատարման հիմնական լծակներն են:

Նկատենք, վոր շինարարության գծով ընդհանրապես թույլ են զարգացած սոցմրցման և հարվածայնության բարձր ձևերը, շինանյութ արտադրող ձեռնարկությունների առանձին բրիգադներն առաջիմ շոշափելի արդյունքներ չեն տվել արտադրանքի վորակի լավացման, ինքնարժեքի իջեցման գծով: Մենք այս տարի պետք է տանք արտադրանքի վորակի ու շինարարության վորակի լավացման ինքնարժեքի իջեցման, աշխատանքի արտադրողականության բարձրացման բայլչեկկյան որինակները, վորովհետև վերջին հաշվով այդպիսի մեծ չափով կուժեղացնի սոցիալիստական շինարարության ծավալման ֆոնդերը: Կառուցող բանվորների աշխատավարձի ավելացման հիմնական գլխավորումը 1932 թ. աշխատավարձի ձախ հավասարեցման վերացումն է, աշխատանքի արտադրողականության բարձրացումը, շինարարության արժեքի իջեցումը, և այդ հիման վրա՝ աշխատավարձի ավելացումը: Մի բան, վորը յերբեք չպետք է աչքաթող անել, այն է, վոր կառուցող բանվորների աշխատավարձն ավելացնելու յե տարեկան առումով, իսկ այդպիսին ձեռք կրերվի շինարարական տարվա յերկարա-

ցումով, վորի հետևանքով կառուցող բանվորը տարեկան ավելի մեծ ֆիզիկ որեր կաշխատի և կատանա ավելի շատ աշխատավարձ, քան ստացել է մինչև հիմա: Դրանից բացի, կառուցող բանվորի աշխատավարձն այս տարի միջին հաշվով ավելանալու յե 5-6 տոկոսով, միջին-ամսական առումով:

Աշխատավարձի ընդհանուր ֆոնդի սահմաններում աշխատավարձի ավելի մեծ բարձրացում ընկնում է վորակյալ բանվորներին, վորովհետև ինչքան շուտ մենք դուրս գանք այդ ճանապարհը, այնքան լավ, վորովհետև դրանումն է բանութի հոսունությունը վերացնելու հիմնական միջոցը, իսկ ինչպե՞լ այդ գործում, ասել է հանազադործություն կատարել, դեմ դնալ մեր սոցիալիստական ինդուստրիայի շահերին: (Ստալին): Ընկ. Ստալինի այս ցուցումը վերաբերվում է նաև կառուցող բանվորների վորակյալ, դեֆիցիտային պրոֆեսիաներին, և մենք անհապաղ պետք է ձեռնարկենք նրա կենսադործմանը:

Առանձնապես պետք է նշել կառուցող բանվորների մեջ կատարվելիք հուրուր-մասնաշաղկան աշխատանքների հարցերը: Կառուցող բանվորներին արտադրության մյուս ճյուղերի բանվորներից ավելի յեն կարելի զգուժ քաղաքական-դատարարականության ամենորյա կուլտուր-քաղաքական աշխատանքի: Պետք է այդ խնդրին ստավերագույն ուշադրություն դարձնել:

Նկատի ունենալով այն հանգամանքը, վոր սոցմրցումը հիմնական յծակն է շինֆինպլանների կատարման գործում, հիմնական մեթոդն է բանվորական լայն մասնակցի պրոդուկտիվական դատարարականության համար, մենք պետք է ուժեղացնենք տվյալ աշխատանքի ֆրոնտը:

Ինչպես տեսնում ենք, մեր շինարարական ծրագիրը մեծ է, հնգամյակի ավարտական տարվա խնդիրներն իրոր վիթխարի յեն, և դրանում չկա վոչ մի անիրադրելի բան. պլանը վիթխարի է, նրա կատարումը պահանջում է ուժերի հսկայական յարում, դրա համար էլ մենք լավ պետք է խմանք մեր պլանների յուր հիմնական հարցերը, վորպեսզի նրանց մանրամասն մշակման և հանդիպական ցուցանիշների հիման վրա հետևենք նրանց կատարման կոնկրետ ընթացքին:

Կուտակցությունը շինարարական ծրագրի կատարման համար ուժեղ պայքար է մղում գլխավոր վտանգ աջ սոցիալիզմի և «ձախ» խտրամաների դեմ: Մեր պլանների հաջող կատարման յերաշխիքն կուտակցության գլխավոր դիմն է, մեր կուտակցության առաջնորդ ընկ. Յտալինի 6 ցուցմունքների լրիվ կատարումն է:

Մեր նվաճումներն ու խնդիրները վոչ մի դեպքում չեն կարող կարգվել ՍՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման յաչար խնդիրներից: ՍՍՀՄ-ն 1931 թ. ավարտեց սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը: 17-րդ կուսկոնֆերենցիան նշեց արդյունաբերության 1932 թվի գարգացման հիմնական ուղիները և փողովրդական տնտեսության զարգացման հիմնական նշանացույցները յերկրորդ հնգամյակի համար, դատարարների վերացման չրջանի համար:

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը յեռանդալին սոցիալիզմ է կառուցում:

Կապիտալիզմն որ-որի վրա կորցնում է իր վաղեմի տնտեսական աւծը: «Վորտե ց և այն բանն ապառաժաւ, մոտ ՍՍՀՄ-ն հնարած իր կու-



տութեան հետամնացութեան, չնայած կապիտալի պահասին, չնայած տեխնիկայիս կոփված տնտեսական կաղերքի բացակայութեան, գլխաւորում է տնտեսական աճող վերելքի պայմաններում և տնտեսական շինարարութեան ֆրոնտում ունի վճռական հաջողութիւններ, իսկ առաջաւոր կապիտալիստական յերկրները չնայած կապիտալի առատութեան, տեխնիկական կաղերքի առատութեան, ավելի բարձր կուլտուրական մակարդակին, գտնվում են աճող տնտեսական ճգնաժամի պայմաններում և տնտեսական զարգացման ընդգամումում կրում են պարտութիւն՝ պարտութեան հետեւից: Պատճառը մեր և կապիտալիստների տնտեսական սխտեմի տարբերութեան մեջ է: Պատճառը տնտեսութեան կապիտալիստական սխտեմի անանկութեան մեջ է: Պատճառն այն ստաբիլութեան մեջ է, վոր ունի տնտեսութեան խորհրդային սխտեմը կապիտալիստական սխտեմի հանդէպ» (Ստալին—Բաղճաշակեալութիւն 16-րդ կուսնամագումարում):

Խորհրդային մեծ Միութեան բանվոր դատակարգն ու կործանողական գլուղացիւթիւնը, կատարելով ժողովրդատնտեսական աճման մեծագույն պլանները ոգտագործում են Խորհրդային Միութեան բոլոր հնարաւորութիւնները, անաւելիւթիւնները և կարողութիւնը, կապիտալիստական աշխարհի անանկութեան և ղեկըտացիայի դեմ հանդիման:

Լինենք սոցիալիզմի կառուցման ակտիւ մարտիկներ և զիտակից կառուցողներ:



Սրբադրեցին՝ Ս. Տ. Ղազարյան յեղ և, Հարությունեալ

Գ Ե Տ Հ Ր Ա Տ Ի Տ Գ Ա Ր Ա Ն

Գլխավոր 2575(բ) — Հրատար. № 2185 Գառնիկ № 1309 Տիրամ 2000

Հանձնված է տպագրութեան 15 ապրիլի 1932 թ.
Ստորագրված է տպագրելու 13 մայիսի 1932 թ.